

Մ. ԶՈՇՏԵՆԿՈ

ՊԱՏՄԱԿԱԾՔՆԵՐ
ԼԵՆԻՆԻ
ՄԱՍԻՆ

ՀԱՅԴԵՏԿՈՒՄ

391.715

9 - 80

44289

200/404

30 MAY 2011

Մ. ԶՈՇԶԵՆԿՈ

891.715
9-80

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ
Լ Ե Ն Ի Ն Ի
ՄԱՍԻՆ

Նկարները
Ն. Տ Ի Ր Ս Ա Ի

Հ Ա Յ Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1940



ՋՐԱՄԱՆԸ

Յերբ Լենինն ութ տարեկան էր, նրա հետ մի փոքրիկ դեպք պատահեց, վորի մասին հետագայում, շատ տարիներ հետո, պատմեց նրա ավագ քույր Աննա Իլյինիչնան:

Աննա Իլյինիչնան իր յեղբոր մասին ասում էր, թե նա շատ չարաճճի տղա յեր: Բայց միևնույն ժամանակ շատ ճշմարտասեր: Նա յերբեք սուտ չեր ասում և միշտ իր չարությունները վիղն էր առնում:

Բայց մի անգամ նրա հետ մի այսպիսի դեպք պատահեց:

Իր հոր և քույրերի հետ, փոքրիկ Վալուդյան դռնացի կազան:

Այնտեղ՝ կազանում, ապրում էր նրանց բարեկամուհին՝ հորաքույր Անյան:

Յեվ ահա նրանք զնացին հորաքույր Անյայի մոտ:

Հորաքույր Անյան եւ յերեխաներ ուներ՝ տղաներ ու աղջիկներ:

Հանդիպումը հետաքրքրական էր:

Յերեխաները շատ չարություն արին, վազվզեցին, զանազան խաղեր խաղացին:

Յեվ մի անգամ այնքան չարություն արին, վոր

Государственная
ордена Ленина
Библиотека СССР
им. В. И. Ленина

19084
48.
3320

М. ЗОЩЕНКО
РАССКАЗЫ
О ЛЕНИНЕ

Армгиз, Ереван, 1940



20824-59



փոքրիկ սեղանի վրա դրված ջրամանը դլորվեց—ըն-
կալ հատակին:

Սաղում եյին ինչ վոր ուրախ մի խաղ: Նրանք իրա-
րից դեռ ու դեն եյին վազում: Յեվ ահա Վալդեյան,
սենյակում վազվզելիս, դիպավ այդ սեղանին: Սեղա-
նը տատանվեց, բյուրեղապակյա գեղեցիկ ջրա-
մանն ընկավ հատակին և փշուր-փշուր յեղավ:

Յերեխաները մինչև անգամ չնկատեցին, թե ո՞վ
կոտրեց ջրամանը: Բոլորը վազվզում ու սլանում եյին
սենյակում:

Յեվ միայն այն ժամանակ, յերբ ջրամանը կոտրե-
վեց, յերեխաները հանդարտվեցին:

Հանկարծ դուռը բացվեց և սենյակը մտավ հորա-
քույր Անյան:

Հորաքույր Անյան լսել էր զրնգոց ու աղմուկ և
յեկեկ եր տեսնելու, թե ի՞նչ է պատահել:

Տեսնելով հատակին ընկած կոտրված ջրամանը,
հորաքույր Անյան հարցրեց.

— Յերեխանե՛ր, ձեզանից ո՞վ է այս ջրամանը
կոտրել:

Բոլոր յերեխաներն ել ասացին՝ — Յես չեմ կոտ-
րել:

Փոքրիկ Վալդեյան ել ասաց. յես չեմ կոտ-
րել:

Ասաց այնպիսի ցածր ձայնով, վոր հազիվ կարե-
լի յեր լսել:

Նա ճիշտ չասաց, վորովհետև առաջին րոպեյին վա-
խեցավ: Ինչ ել վոր լինի, ոտար ընակարան եր, հո-
րաքույր Անյային քիչ եր ծանոթ: Բացի դրանից, նա
բոլորից փոքրն եր: Յեվ նրա լեզուն չպտտվեց, վոր ա-
սի՝ յես եմ կոտրել:

Այդ ժամանակ հորաքույր Անյան ասաց.

— Այդ դեպքում յերևում է, վոր ջրամանն ինքն
է կոտրվել: Յերեխ սեղանի վրա նա ձանձրանում եր,
այդ պատճառով ընկել է:

Յերեխաները ծիծաղեցին և ասացին.

— Յերեւի ջրամանն ուզում եր մեզ հետ վաղվղել: Այդ պատճառով ել սեղանից թռել ե հատակին: Բայց խեղճը մոռացել ե, վոր ինքն ապակուց ե շինված, այդ պատճառով ել կոտրվել ե:

Յեւ յերեխաներն ելի ծիծաղեցին:

Միայն փոքրիկ Վալուդյան չծիծաղեց: Նա գնաց մյուս սենյակը ե նստեց պատուհանի առաջ: Յերկար ժամանակ նստած եր այնտեղ ե ինչ վոր բան եր մտածում: Յեւ միայն յերեկոյան դեմ նա կրկին սկսեց յերեխաների հետ չարություն անել:

Բայց ահա անցավ յերկու ամիս:

Կազանից վաղուց եյին վերադարձել: Կրկին ապրում եյին իրենց քաղաքում՝ Սիմբիրսկում:

Մի անգամ յերեկոյան, յերբ յերեխաները պառկում եյին քնելու, մայրիկը մոտեցավ Վալուդյայի մահճակալին ե տեսավ, վոր տղան դառնապես լաց ե լինում:

Մայրիկը հարցրեց.

— Ինչո՞ւ յես լաց լինում:

Տղան հեկեկալով ասաց.

— Մայրիկ, յերբ մենք Կազանումն եյինք, յես հորաքույր Անյային սուտ ասացի: Ասացի, թե յես չեմ կոտրել ջրամանը, բայց յես եյի կոտրել:

Մայրիկն սկսեց մխիթարել յերեխային:

Նա ասաց.

— Դե, այդ վոչինչ: Լաց մի՛ լինի: Յես հորաքույր Անյային նամակ կգրեմ: Յեւ նա, յերեւի, քեզ կների:

Տղան հեկեկալով ասաց.

— Դու անպատճառ հորաքույր Անյային նամակ գրիր: Գրիր, վոր յես եմ կոտրել:

Մայրիկը կրկին սկսեց մխիթարել նրան: Դրանից հետո յերեխան հանգստացավ ու քնեց:

Համբուրելով ե վերմակով ծածկելով իր փոքրիկ վորդուն, մայրիկը մտածեց. — Ի՞նչ զարմանալի յերեխա յես: Նա յերկու ամիս շարունակ հիշել ե այդ

պատմությունը ե յերկու ամիս վշտացել, վոր պատահաբար ճիշտ չի ասել: Իսկ այժմ, յերբ խոստովանեց, թեթեւացավ ե մինչև անգամ ժպիտը դեմքին քնեց:

Մյուս ուր մայրիկը հորաքույր Անյային նամակ գրեց: Շուտով հորաքույր Անյան պատասխանեց, վոր նա յերբեք ել չի բարկանում իր սիրելի յեղբորվորդու վրա ե կրկին սպասում ե, վոր նա հյուր գա իրենց մոտ:



ՄՈՒՐԱԳՈՒՅՆ ԱՅԾԻԿ

Յերբ Լենինը փոքրիկ էր, նա համարյա վոչ մի բանից չէր վախենում:

Նա համարձակ մտնում էր մութ սենյակը: Յերբ սարսափելի հեքիաթներ էյին պատմում՝ լաց չէր լինում: Յե՛վ առհասարակ նա համարյա թե յերբեք լաց չէր լինում:

Իսկ նրա կրտսեր յեղբայրը՝ Միտյան, նույնպես լավ ու բարի յերեխա յեր: Բայց չափազանց խղճա-հարկող էր:

Յերբ վորեւ մեկը տխուր յերգ էր յերգում, Միտյան հոնգուր-հոնգուր լաց էր լինում:

Մանավանդ նա դառնապես լաց էր լինում, յերբ յերեխաները յերգում էյին «Այծիկ» յերգը:

Յերեխաներից չատերը գիտեն այդ յերգը.

Կար-չկար յերբեմն մի աղփատ պառվիկ, Ունեք մեք պառավը մոխրագույն այծիկ:

Պառավն իր այծիկին անչափ էր սիրում, Անչափ էր սիրում և լավ խնամում:

Մտածեց այծիկը անտառը գնալ,
Անտառը գնալ, վազվզել, խաղալ:

Վրա վագեցին չար-չար գայլերը,
Թռեցին տատին պոչն ու տոտերը:

Անկասկած, այս յերգը տխուր յերգ է: Բայց լաց լինել պետք չէր, իհարկէ: Ձե՛ վոր դա յերգ է: Սար-քած բան է և վոչ թե իրոք կատարված:

Անպայման այծիկին պետք է խղճալ: Բայց մի քիչ էլ ինքն է մեղավոր. ինչու առանց թույլտվու-թյան է գնացել անտառը զբոսնելու:

Ընդհանրապես, յերբ Միտյան, մյուս յերեխանե-րի հետ, այս յերգը յերգում էր, նրա ձայնը դողդո-ղում էր և չրթունքները ցնցվում էյին:

Իսկ յերբ Միտյան հասնում էր տխուր խոսքե-րին. «վրա վագեցին չար-չար գայլերը», նա ամեն անգամ հոնգուր-հոնգուր լաց էր լինում:

Մի անգամ յերեխաները հավաքվեցին դաշնամու-րի մոտ և այս յերգը յերգեցին:

Նրանք հաջողությամբ յերկու տող յերգեցին: Իսկ յերբ հասան յերգի տխուր տեղը, թե ինչպես այ-ծիկն անտառը գնաց, Միտյան սկսեց հեկեկալ:

Փոքրիկ Վալոդյան, այս տեսնելով, դարձավ դեպի Միտյան և դեմքին սարսափելի տեսք տալով, դիտ-մամբ անձոռնի և բարձր ձայնով յերգեց.

«Վը-րա վա-գե-ցին չար-չար գայ-լե-րը»...

Այստեղ Միտյան, իհարկէ, էլ չդիմացավ և ավե-լի հեկեկաց:

Մեծ քույրը յեղբորը նկատողություն արավ, թե ինչո՛ւ յե Միտյային ջղայնացնում:

Փոքրիկ Վալոդյան պատասխանեց.

— Իսկ ինչո՞ւ յե վախենում: Յես չեմ ուզում, վոր նա լաց լինի և վախենա: Յերեխաները պետք է քաջ լինեն:



Միտյան ասաց.


— Յես ել չեմ վախենա:

Յերեխաները կրկին յերգեցին այդ յերգը: Յեվ Միտյան քաջի նման մինչև վերջը յերգեց: Յեվ միայն մի կաթիլ արցունք հոսեց նրա թշից, յերբ յերեխաները յերգը վերջացնում էին.

«Թողեցին տատին պոչն ու տոտերը»:

Փոքրիկ Վալուդյան համբուրեց իր կրտսեր յեղբորը և ասաց նրան.

— Ա՛յ, հիմա ղոչաղ ես:



ԻՆՉՊԵՍ ԵՐ ՍՈՎՈՐՈՒՄ ԼԵՆԻՆԸ

Լենինը շատ լավ եր սովորում, մինչև անգամ սքանչելի: Գիմնազիան ավարտելով՝ վրսկե մեղալ ստացավ:

Բարձր ուսումնական հիմնարկում ել, յերեւի, նա շատ լավ կսովորեր: Սակայն դժբախտաբար, վարիչները նրան համալսարանից դուրս արին, վորովհետեւ նա հեղափոխական եր: Իսկ վարիչներն այդ բանը չեյին հանդուրժում: Յարն ել թույլ չեր տալիս, վոր հեղափոխականներն ուսում առնեն:

Մի խոսքով, Լենինին թույլ չտվին, վոր համալսարանում սովորի:

Յեթե Լենինի տեղ ուրիշ մարդ լիներ, առանց բարձրագույն կրթության կմնար: Բայց Լենինն այդ չուզեց:

Նա մայրիկին ասաց. «Յես անպատճառ բարձրագույն դպրոցը կավարտեմ»:

Բայց ժամանակն անցնում եր: Դուրս անելուց հետո յերկու տարի յեր անցել:

Վերջապես նա դիմում տվեց մինխտրին: Նա

Թույլտվություն խնդրեց, վոր միանգամից բարձրագույն դպրոցի ավարտման քննություն տա:

Մինխտրը զարմացավ ու մտածեց.

«Նա ինչպե՞ս կարող ե միանգամից բոլոր քննությունները տալ: Ձե՛ վոր բարձրագույն դպրոցում չի սովորում: Լա՛վ: Յես նրան թույլ կտամ, բայց, միևնույն ե, նա քննությունները չի կարող տալ»:

Մինխտրի թույլտվությունն ստանալով, Լենինն սկսեց պարապել:

Ամբողջ որերով նա նստում եր գիրքը ձեռքին, կարդում եր, գրում, լեզուներ եր ուսումնասիրում, թարգմանում եր և այլն:

Ամռանը նա այգում, լորինների ծառուղիում իր համար կաբինետ չինեց: Այնտեղ, դետնի մեջ սեղան և նստարան ամրացրեց: Յեվ ամեն առավոտ գնում եր այնտեղ և մենակ պարապում մինչև ճաշ:

Հանգստանալուց և լողանալուց հետո, նա կրկին գնում եր այնտեղ: Յեվ կրկին յերեք կամ չորս ժամ պարապում:

Իսկ յերեկոյան, զբոսանքից և լողանալուց հետո, ազգականները նորից տեսնում եյին նրան գիրքը ձեռքին նստած:

Ազգականները շատ եյին զարմանում, թե ինչպե՞ս ե նա կարողանում այդքան շատ պարապել: Մինչև անգամ վախենում եյին, վոր նա կարող ե հիվանդանալ:

Բայց Լենինն ասաց նրանց.

— Մարդ կարող ե շատ սովորել ու աշխատել, յեթե կանոնավոր կերպով հանգստանա:

Յեվ, իսկապես, Լենինը կանոնավոր կերպով հանգստանում եր: Նա մի ժամ աշխատում եր, հետո մարմնամարզություն եր անում: Հետո կրկին մի կամ յերկու ժամ գրում եր, ապա վազում գետը՝ լողանալու:

Ապա, հանգստանալուց, կամ անտառում զբոսնելուց հետո, վերադառնում եր և կրկին սովորում:

Իր ամառային կարինետում, սեղանի մոտ, նա մարզալծակ էր սարքել: Ժամանակ առ ժամանակ այդ մարզալծակի վրա վարժություններ էր կատարում:

Լավ յեղանակներին նա որակաճ յերկու կամ յերեք անգամ լողանում էր: Նա շատ լավ լողալ գիտեր: Նա այնպես էր լող տալիս, վոր բոլորը զարմանում էին:

Նրա ծանոթներից մեկը, հիշելով անցյալը, ասում էր, վոր Շվեդարիայում մի սարսափելի լիճ կար, վորտեղ շարունակ մարդիկ էյին խեղդվում: Այդ լիճը շատ խորն էր: Լճի մեջ կային սառը հոսանքներ, փոսեր և ջրապտուտքներ: Բայց Լենինը, առանց վախենալու, այդ լճի մեջ լողանում էր:

Այդ ծանոթը մի անգամ ասաց, վոր պետք է զգուշ լինել. այնտեղ մարդիկ են խեղդվում:

— Ասում եք՝ խեղդվում են, — հարցրեց Լենինը: — Վոչի՛նչ, իսկ մենք չենք խեղդվի:

Այս ասելուց հետո լողալով այնքան հեռու գնաց, վոր նրան հազիվ կարելի էր տեսնել:

Յեվ ահա, լողանալու և Փիզկուլտուրայի շնորհիվ, կանոնավոր հանգստանալու շնորհիվ, Լենինը կարողանում էր շատ աշխատել և կարողացավ բարձրագույն դպրոցի համար միանգամից պատրաստվել:

Նա յերկու տարի համարյա այդպես յեռանդով զարապեց: Յեվ այդ ժամանակի ընթացքում կարողացավ յուրացնել համալսարանի ամբողջ դասընթացը, այն, ինչ ուրիշները չորս տարում էյին ուսումնասիրում:

Նա բոլոր քննությունները տվեց և առաջին կարգի՝ վկայագիր ստացավ:

Յեվ բոլոր պրոֆեսորները նրան ասացին.

— Շատ զարմանալի յե: Ձե՛ վոր դուք համալսարանում չեք սովորել և մեր դասախոսությունները չեք լսել: Ի՞նչպես եք կարողացել այդպես հիանալի պատրաստվել: Յերևի վորևէ մեկը ձեզ ոգնել է:

Լենինն ասաց.




— Վո՛չ, յես մենակ եմ պարապել:

Այս խոսքից հետո պրոֆեսորներն ավելի զարմա-
ցան: Մինիստրն ել զարմանքից ձեռքերը տարածեց:

Բայց պրոֆեսորներն ու մինիստրը չգիտեյին,
վոր վիթխարի խելքից և հրաշալի ընդունակություն-
ներից բացի, Լենինը մեծ աշխատունակություն ուներ:
Իսկ այդ աշխատունակությունը կապված էր ֆիզիկու-
ստուրայի և կանոնավոր կերպով հանգստանալու հետ:

Ահա թե ինչու Լենինն այնքան հիանալի հաջողու-
թյամբ ավարտեց իր ուսումը:



ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆԸ ԾԽԵԼԸ ԹՈՂԵՑ

Յերբ Լենինը տասնյոթ տարեկան էր, սկսեց
ծխել:

Այն ժամանակ նա արդեն ուսանող էր: Յեվ զար-
մանալի չէր, վոր նա ծխել սկսեց:

Յերբ մի վորեւէ փոքրիկ, տասերկու տարեկան
ողա յե ծխում, դա սարսափելի չէ: Իսկ ուսանողնե-
րից շատերն են ծխում: Թող ծխեն՝ նրանք արդեն
մեծահասակ են:

Իսկ Լենինի մոտ շարունակ դալիս էյին նրա ու-
սանող ընկերները: Յեվ գրեթե բոլորն ել ծխում էյին:
Պատահում էր, վոր փակվում էյին սենյակում, խո-
սում, վիճում, զրուցում, հետն ել ծխում՝ չոգեքարչի
նման:

Ահա այդ պատճառով Լենինն ել սկսեց ծխել սո-
վորել:

Ծխելը, իհարկե, առողջության համար շատ վնա-
սակար է: Դրանից մարդիկ հաղում են, քիչ են ու-
տում, նիհարում են ու հիվանդանում: Բայց ուլքեր
արդեն սկսել են ծխել, նրանց համար թողնելն այնքան
ել հեշտ չէ:

Իսկ Լենինի մայրը՝ Մարիա Ալեքսանդրովնան,
բժշկի աղջիկ էր: Նա գիտեր, վոր ծխելը շատ վնա-
սակար է: Նա շատ էր վշտանում սիրելի վոր-
դին ծխել և սովորել:





Նա շատ անգամ եր խնդրել վորդուն, վոր թողնի
այդ սովորությունը: Բայց Վլադիմիր Իլյիչը միայն
Ժպտում եր ու ասում:

— Վոչի՛նչ: Յես առողջ եմ: Ծխելն ինձ համար
այնքան ել վնասակար չե:

Բայց Մարիա Ալեքսանդրովնան իր վորդուն շատ
եր սիրում: Այդ պատճառով ել նա վորոշեց այնպես
անել, վոր նա, այնուամենայնիվ, ծխելը թողնի:

Յեվ յերկար Ժամանակ չգիտեր թե ի՛նչ անի և
ի՛նչպես վարվի:

Մի անգամ նա դիտմամբ ասաց նրան.

— Մենք ապրում ենք այն կենսաթոշակով, վոր
յես ստանում եմ քո հոր՝ Իլյա Նիկոլաևիչի մահվանից
հետո: Այդ կենսաթոշակը քիչ ե: Յուրաքանչյուր
ովելորդ ծախս տնտեսության վրա ազդում ե: Թեև
քո գլանակները թանկ չեն, բայց և այնպես, յեթե
դու չծխեիր, տնտեսության համար լավ կլիներ:

Նա այս խոսքերը դիտմամբ ասաց: Գլանակները
շատ եժան եյին: Յեվ տնտեսության վրա չեյին ազ-
դում: Բայց մայրիկը անչափ շատ եր ուզում, վոր իր
վորդին չծխի: Ահա թե ինչու նա այդպես ասաց:

Լսելով մոր այդ խոսքերը, Վլադիմիր Իլյիչը
ասաց:

— Ների՛ր, մայրիկ: Ա՛յ, այդ մասին յես չեմ
մտածել: Լավ, հենց այսօր ծխելը կթողնեմ:

Այս խոսքերն ասելուց հետո, նա գրպանից հա-
նեց գլանակները և դրեց սեղանի վրա: Ու ել ձեռք
չափեց:

Իսկ ովքեր ծխում են, նրանք գիտեն, թե ինչպի-
սի ամուր կամք պետք ե ունենալ այդ սովորությունը
միանգամից թողնելու համար: Թույլ կամք ունեցող
մարդկանցից վոմանք մինչև անգամ դիմում են
բժիշկներին՝ ողնել իրենց, վոր ծխելը թողնեն:

Իսկ բժիշկները նրանց բերանին ինչ վոր դեղ են
քսում, վոր ծխելը զգվելի լինի:

Իսկ ավելի թույլ կամք ունեցողներին բժիշկները

քնացնում են և ծխելու վնասակարության մասին
պոռնազան սարսափելի մտքեր են ներշնչում: Միայն
այդ ժամանակ են այդ մարդիկ ծխելը թողնում:

Շատերն ել ծխելը չեն թողնում և գլխներում
ծխելու վնասակարության մասին սարսափելի մտքեր
ունենալով՝ շարունակում են ծխել:

Բայց Լենինը չատ ամուր կամք ուներ: Նա, ա-
ռանց բժիշկներին, վորոշեց ծխելը թողնել:

Յեվ իսկապես թողեց: Ու այլևս յերբեք չծխեց:

Նա մի ուժեղ մարդ էր՝ յերկաթե կամքով:

Բոլոր մարդիկ ել պետք է լինեն այնպես, ինչպես
նա:

ՅԵՐԲԵՄՆ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԹԱՆԱՔԱՄԱՆՆԵՐ ՈՒՏԵԼ

Ամբողջ տասնչորս ամիս Լենինը նստեց ցարական
բանտում:

Նա նստած էր մենակ՝ մի փոքրիկ, կիսամութ
խցում: Մի յերկաթե մահճակալ, մի սեղան և մի ա-
թոռ, ահա այն բոլորը, ինչ կար այնտեղ:

Յեթե Լենինի տեղ ուրիշ մարդ լիներ, ամբողջ ո-
րը լաց կլիներ և կտանջվեր այդ խցում: Բայց Լենինն
այդպիսի մարդ չէր:

Նա այդ խցում որերով աշխատում էր:

Առավոտյան նա մարմնամարզություն էր անում,
չսկ հետո սկսում էր գիրք գրել:

Նա այստեղ գրեց մի շատ պետքական հեղափո-
խական գիրք՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաս-
տանում»:

Իսկ գրելը բանտում արդելված էր: Յեվ այնտեղ
վոչինչ չէին տալիս. վո՛չ մատիտ, վո՛չ գրչածայր,
վո՛չ թանաք, վոչինչ չէին տալիս: Թուղթ ել չէին
տալիս: Ինչպես կուգես, այնպես ել գրիր:

Այնտեղ թույլ էին տալիս միայն գիրք կարդալ:
Ազդականները բանտարկյալին գիրք ուղարկելու է-
րավունք ունեյին:

Յեվ ահա Լենինն սկսեց գրել այդ գրքերի վրա:
Բայց պետք է այնպես գրեր, վոր բանտում վոչ վոք
գլխի չընկներ, թե գրքի մեջ ինչ վոր բան է գրված,
վորովհետև բանտում, բոլոր գրքերը ազդական-
ներին տալուց առաջ, ստուգում էին: Յեվ յեթե

տեսնում եյին, վոր գրքի մեջ թեկուզ մի բառ և գրք-
ված, այդ գիրքն այրում եյին:

Իսկ հեղափոխականները գիտեյին, վոր կարելի
յե կաթով գրել:

Յեթե թղթի վրա կաթով գրենք, վոչինչ չի յերե-
գա:

Իսկ գրածը կարդալու համար, պետք է թուղթը
լամպի կամ մոմի վրա տաքացնել: Այդ ժամանակ
կաթն սկսում է մզանալ, թղթի վրա յերևում են
գարչնագույն տառեր և գրածը կարելի յե կարդալ:

Ահա այդպես ել գրում եր Լենինը. գրքի լու-
սանցքներում և տողերի արանքում:

Նրա աղգականներն այդ մասին գիտեյին: Յեվ
յերբ գիրքը վերադարձնում եյին, գրքի յուրաքան-
չյուր թերթը լամպի վրա տաքացնում եյին, գրածը
կարդում և արտագրում:

Լենինն իր գիրքը բանտում այս ձևով գրեց:

Բայց այսպիսի աշխատանքի համար ել պետք եր
չափ զգուշ լինել:

Յեթե բանտի վերակացուն տեսներ, թե նա այդ-
պես գրում է, նրա բանը վատ կլիներ: Այն ժամանակ
նրան, իբրև հիվանդի, կաթ ել չեյին տա: Յեվ վո-
րհե կերպով ծանր պատիժ կտային:

Իսկ վերակացուն հաճախ եր խուցը մտնում: Կամ
նայում եր դռան մեջ յեղած պատուհանից, թե բան-
տարկյալն ի՞նչ է անում:

Այն ժամանակ Լենինը մի այսպիսի բան մտածեց:
Նա հացից փոքրիկ թանաքամաններ եր շինում, մեջը
կաթ եր լցնում և իր ձեռք բերած գրիչը նրա մեջ թա-
թախում եր ու գրում:

Մի անգամ վերակացուն դռան մեջ յեղած պա-
տուհանից կամացուկ նայեց և տարորինակ պատ-
կեր տեսավ. Լենինը գրում եր:

Վերակացուն արագ բաց արավ դուռը, ներս մը-
տավ խուցը և ասաց.

— Դուք բռնվել եք հանցանքի մեջ: Յես կար-

ծում եմ, վոր դուք այս բողոքիս ինչ վոր բան եյիք
գրում:

Լենինը վերցրեց իր թանաքամանը, հանգիստ բե-
րանը գրեց և ծամեց:

Վերակացուն ասաց.

— Այդ ի՞նչ եք անում: Դուք թանաքաման եք ու-
տում:

Լենինն ասաց.

— Դուք, կարծես թե կուրացել եք: Սա թանա-
քաման չե, այլ հաց: Յեվ յես ուտում եմ:

Վերակացուն նայեց, տեսավ, վոր իսկապես հաց
է և մտածեց.

«Յերևի աչքերս փչացել են: Ինձ թվաց, թե սա
թանաքաման է ուտում»:

Այսպես մտածելով՝ վերակացուն դուրս դնաց:
Իսկ Լենինն իսկույն հացից ուրիշ թանաքաման շինեց,
մեջը կաթ լցրեց և նորից սկսեց գրել:


Յեվ ամեն անգամ, յերբ վերակացուն գալիս
եր, Լենինը հանգիստ վերցնում եր իր թանաքամանը
և իսկույն ուտում: Թանաքամանը մինչև անգամ հա-
մեղ եր, վորովհետև հաց եր ու կաթ:

Յերբ Լենինը բանտից դուրս յեկավ, ծիծաղելով
ասաց իր աղգականներին և ծանոթներին.

— Դիտե՞ք, մի անգամ գործս չհաջողվեց. ստիպ-
ված եյի յերկու ժամում վեց թանաքաման ուտել:

Բոլորն ել ծիծաղեցին: Իսկ վորոնք չգիտեյին,
թե բանն ինչումն է, շատ զարմացան. ինչպե՞ս կա-
րելի յե թանաքամաններ ուտել:

Բայց ա՛յ, յերևում է, վոր յերբեմն կարելի յե
թանաքամաններ ուտել:



ՊԱՏՄԱՎԱԾՔ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆԸ
ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅԱՄԲ ԺԱՆԴԱՐՄԱՆԵՐԻՆ ԽԱԲԵՑ

Յերբ Լենինը քսանվեց տարեկան էր, արդեն բոլորին հայտնի հեղափոխական էր և ցարական կառավարութիւնը նրանից վախենում էր այնպէս, ինչպէս կրակից:

Յարը հրամայեց Լենինին բանտարկել:

Յեւ վաղեմիւր Իլլիչը տառնչորս ամիս բանտանտեց:

Իսկ դրանից հետո ժանդարմները նրան աքսորեցին Սիբիր: Յեւ այնտեղ, Սիբիրի մի գյուղում, Լենինն ապրեց ամբողջ յերեք տարի:

Դա մի խուլ գյուղ էր: Գտնվում էր տայգայում: Այնտեղ վոչ մի լավ բան չկար: Այնտեղից հոսում էր Շուշ անունով փոքրիկ գետը: Այնտեղ աճել էր փոքրիկ անտառ, վորի մեջ մինչև անգամ ծառեր քիչ կային:

Բայց վաղեմիւր Իլլիչը չէր վշտանում, վոր իրեն մի այդպիսի խուլ տեղ են աքսորել: Նա շատ էր աշխատում, հեղափոխական գրքեր էր գրում, գրուցում էր գյուղացիների հետ և իր խորհուրդներով նրանց ոգնում:

Իսկ ազատ ժամանակ, իր վորսորդական «ժեյնկա» շան հետ, վորսի յեր գնում, լողանում էր, շախ-

մատ էր խաղում: Շախմատն էլ ծառի կեղևից ինքն էր պատրաստել: Յեւ պատրաստել էր շատ լավ, մինչև անգամ հիանալի:

Ժամանակն աննկատելի կերպով անցնում էր: Անցավ համարյա թե յերեք տարի: Յեւ արդեն աքսորման ժամկետը մոտենում էր:

Վաղեմիւր Իլլիչն արդեն սկսել էր մտածել, թե ուր գնա, վոր շարունակի հեղափոխական աշխատանքը:

Աքսորման ժամկետը վերջաջնալուց քիչ առաջ, այն խրճիթը, վորտեղ Լենինն էր ապրում, յեկան ցարական ժանդարմները:

Նրանք ասացին.

— Ահա թե ինչ: Իսկույն մենք այստեղ խուզարկութիւն կկատարենք: Յեթե ցարական կառավարութեան կողմից արգելված վորեւ բան գտնենք, այն ժամանակ զգուշացեք. ազատելու փոխարեն մենք ձեզ առնվազն յերեք տարի կթողնենք այս խուլ գյուղում:

Լենինն արգելված գրքեր և զանազան հեղափոխական փաստաթղթեր ունէր: Յեւ այդ բոլոր գրքերն ու փաստաթղթերը գտնվում էյին գրադահարանի ներքեի դարակի վրա:

Ահա մի հաստ, բեղավոր ժանդարմ դռան մոտ կանգնեց, վոր վոչ վոք ներս չգա և դուրս չգնա:

Իսկ մյուս ժանդարմը, վորը փոքրահասակ էր, նույնպէս բեղավոր ու կատաղի, շրջում էր սենյակում և քիթը խոթում ամեն բանի մեջ:

Նա խուզարկեց սեղանը, կամոզը, նայեց վառարանի ներսը, մինչև անգամ չծուլացավ, մահճակալի տակ մտավ, վոր տեսնի, թե այնտեղ ինչ կա:

Հետո նա մոտեցավ գրքերի պահարանին և ասաց.

— Իսկ այս պահարանում ի՞նչ կա:

Լենինն ասաց.

— Իմ գրքերն են:

Ժանդարմն ասաց.

— Այ, իսկույն կնայեմ ձեր գրքերը և կտեսնեմ, թե ի՞նչ գրքեր են:

Յեւ ժանդարմը, այս պահարանի մոտ կանգնած, մտածում եր. վորտե՞ղից սկսեմ խուզարկությունը. վերևի՞, թե՞ ներքևի դարակից:

Լենինի կինը, Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան, նայում եր ժանդարմին ու մտածում.

«Միայն թե վերևի դարակից սկսեր խուզարկությունը: Յեթե վերևի դարակից սկսի, լավ կլինի, այդ դեպքում խուզարկության վերջում կհոգնի և վերջին դարակը ուշադիր չի խուզարկի: Իսկ յեթե ներքևի դարակից սկսի, այն ժամանակ վատ կլինի. հենց այդ դարակի վրա, ուրիշ գրքերի հետ, արդելված գրքեր ել կան»:

Լենինն ել եր նայում ժանդարմին, նա յեւ եր այդ մասին մտածում:

Հանկարծ Լենինը, թեթե ժպտալով իր մտքերի վրա, վերցրեց աթոռը, դրեց պահարանի մոտ և ժանդարմին ասաց.

— Փոխանակ ձեր կարճ հասակով ձգվելու, կանգնեցեք այդ աթոռի վրա և սկսեցեք ստուգել գրքերս:

Փոքրիկ, բեղավոր ժանդարմը, հեղափոխականի կողմից այսպիսի սիրալիրություն տեսնելով, շնորհակալություն հայտնեց և բարձրացավ աթոռի վրա: Յեւ քանի վոր նա բարձրացավ աթոռի վրա, ապա, պարզ ե, վոր խուզարկությունն սկսեց վերևի դարակից: Այսինքն այն, ինչ պետք եր Լենինին:

Յեւ ժանդարմին նայելով, Վլադիմիր Իլյիչը ժպտաց:

Տեսնելով, վոր Լենինը ժանդարմին ստիպեց տնել այնպես, ինչպես ինքն եր ուզում, Կրուպսկայան ել ծիծաղեց:

Յեւ ահա ժանդարմը բան ե վորոնում վերևի դարակներում, կարդում ե վերնագրերը և յուրաքանչյուր գիրքը թափ տալիս: Իսկ ժամանակն անցնում ե: Գրք-

քեր շատ կային: Ժանդարմը յերեք ժամում հաղիվ կարողացավ չորս դարակ խուզարկել:

Հինգերորդ դարակն արդեն ժանդարմն ուշադրությամբ չխուզարկեց: Մանավանդ, վոր դռան մոտ կանգնած հաստիկ ժանդարմն սկսեց հառաչել ու ծանրորեն թախծել:

— Ո՛յ, ինչ յերկարեց խուզարկությունը: Յես հոգնել եմ, սոված եմ:

Փոքրամարմին ժանդարմն ասաց.

— Իսկույն կզնանք ճաշելու: Վերջին դարակն ե մնում: Յեթե ամբողջ պահարանում բան չգտնվեց, յերևի այս դարակում ել վոչինչ չկա:

Հաստիկ ժանդարմն ասաց.


— Պարզ ե, վոր սրանց մոտ վոչինչ չկա: Գնանք ճաշելու:

Փոքրիկ ժանդարմը, ներքևի դարակը համարյա թե չխուզարկելով, ասաց Լենինին.

— Դուրս ե գալիս, վոր ձեզ մոտ արգելված բան չգտանք: Պատի՛վ ունեմ:

Այս ասելուց հետո՝ ժանդարմները դնացին:

Յեւ յերբ, նրանց դնալուց հետո, դուռը ծածկվեց, Վլադիմիր Իլյիչը և Կրուպսկայան սկսեցին ուրախ-ուրախ ծիծաղել, թե ինչպես ժանդարմներին հիմարացրին:



ՊԱՏՄՎԱԾՔ ԱՅՆ ՄԱՍԻՆ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆԸ ՄԻ ՅԵՐԵՄԱՅՈՒ ՀԱՄԱՐ ԽԱՂԱԼԻՔ ԳՆԵՑ

Մի ոռւս հեղափոխական ցարական բանտից փախալ և ժանդարմներից թաղնվեց արտասահմանում:

Նա սկսեց ապրել Շվեյցարիայի Յյուրիխ քաղաքում, մտալ կահույքի գործարանը և սկսեց աշխատել:

Շուտով Շվեյցարիա յեկալ նաև Լենինը:

Յեվ մեր բանվորը շատ եր ուզում տեսնել Լենինին, վորովհետև նրա մասին շատ լավ բաներ եր լսել և նրա գրքերը կարդացել եր:

Յեվ ահա մի անգամ այդ բանվորն իմացալ, վոր Լենինը «Ռուս բանվորների խմբակի» ժողովում ճառ է ասելու:

Մեր բանվորը վորոչեց գնալ այդ ժողովը, վոր Լենինին լսի:

Իսկ այդ բանվորի կինը նույնպես կահույքի գոր-

ծարանում եր աշխատում, միայն թե՛ յերեկոյան հերթին: Վոչ վոք չկար, վորի մոտ մեր բանվորն իր փոքրիկ վորդուն՝ Դոնատին թողներ:

Այդ պատճառով ել բանվորն ասաց իր վորդուն.

— Արի՛, միասին գնանք ժողով, Լենինին տեսնենք:

Յեվ ահա նա բռնեց իր վորդու թաթիկը և գնացին բանվորական ահումբը:

Յեկան ահումբը: Դեռ վաղ եր: Վոչ վոք չկար: Դահլիճում միայն մի մարդ եր նստել և լրագիր եր կարդում:

Բանվորն իր վորդուն նստեցրեց պատուհանի մոտ և սկսեց ջղայնորեն գնալ-գալ դահլիճում և մտածել.

«Լենինը յերևի չի գա»:

Այդ ժամանակ լրագիր կարդացող մարդը (իսկ դա Լենինն եր) ասաց բանվորին.

— Այնպիսի լավ յեղանակ է, իսկ դուք ձեր փոքրիկ վորդուն պահում եք այս վատ ողում: Թողե՛ք, գնա բակում խաղա:

Բանվորը պատասխանեց.

— Վո՛չ, իմ Դոնատը դեռ շատ փոքրիկ է: Բակում նրա համար տխուր կլինի: Բացի դրանից, վախենում եմ, վոր նա փողոց դուրս գա և մոլորվի: Ավելի լավ է նստենք այստեղ, սպասենք՝ Լենինը գա:

Լենինը յերեսային ասաց.


— Դե՛, ձեռքդ տուր, գնանք մի քիչ զբոսնենք:

Լենինը բռնեց տղայի ձեռքը և դուրս յեկան փողոց:

Մոտեցան մի խաղալիքի խանութի: Ներս մտան: Լենինն ասաց.

— Ուզո՞ւմ ես քեզ համար նավակ գնեմ:

Դա մի հրաշալի փոքրիկ նավակ եր: Առաջաստով: Առաջաստն ել բարձրանում ու իջնում եր: Առաջաստի մոտ ել մի փոքրիկ նավաստի յեր կանգնել: Նավակի մեջ կային փոքրիկ նստարաններ, փոքրիկ ղեկ և դրո-



չալի: Մի խոսքով՝ մի զարմանալի խաղալիք: Տղան
չափազանց ուրախացավ:

Յեւ Լենինն այդ խաղալիքը գնեց յերեխայի հա-
մար:

Նրանք շտապով բախը գնացին: Այնտեղ մի ցած-
րիկ ջրհոր կար, փոքրիկ լճակի նման:

Այդ ջրհորի մեջ յերեխան բաց թողեց իր նավակը:
Քամին ուռցնում էր առաջատուր և նավակը հրա-
շալի կերպով առաջ էր գնում:

Յերեխան այնքան ուրախ էր, վոր ծիծաղում էր,
ծափ էր տալիս և գոչում. «Նավաստի՛, մի՛ վախենա:
Առաջ լողա»:

Ջրհորի մոտ կանգնել էր Լենինը և նույնպես ծի-
ծաղում էր:

Իսկ այդ ժամանակ բանվորը չըջում էր դահլի-
ճում, շղայնանում ու մտածում. «Լենինը դեռ չի յե-
30

կել, բացի դրանից, ինչ վոր մի անհայտ մարդ տղայիս
վերցրեց ու գնաց»:

Իսկ դահլիճում արդեն շատ մարդ էր հավաքվել:
Յեւ բոլորն իրար հարցնում էին.

— Բայց ո՞ւր է Լենինը: Մի՞թե չի յեկել:

Այդ ժամանակ մարդկանցից մեկը պատուհանից
դուրս նայեց ու ասաց.

— Մտիկ արեք. հրե՛ Լենինը, բախումն է՝ ինչ
վոր փոքրիկ յերեխայի հետ:

Բոլորը դուրս նայեցին: Մեր բանվորն էլ նայեց
պատուհանից և ջրհորի մոտ տեսավ իր տղային Լենինի
հետ:

Բանվորը շատ զարմացավ և մտածեց. «Ուրեմն սա՞
յն Լենինը: Իսկ յես կարծում եյի, թե դա ուրիշ մարդ
է: Չափազանց հասարակ է ու բարի: Մինչև անդամ
վորդուս համար խաղալիք է գնել»:

Այդ ժամանակ Լենինը վերադարձավ դահլիճը և
սկսեց բանվորներին հետ զրուցել:

ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑՈՒՄ

Մի բանվոր, վոմն Գրիգորիյ Իվանով, պաշտոնա-
կան գործերով յեկել եր Կրեմլ:

Նա յեկել եր Պիտերից, վոր Կրեմլի պահեստ
հանձնի զենքերը— հրացանները, սրերը, սվինները,
ատրճանակները և հրազենի զանազան պաշար:

Յեվ ահա նա կատարեց ու գերակատարեց իր այդ
խնդիրն ու հանգիստ սրտով զբոսնում ե Կրեմլում,—
յերազում ե վորևէ տեղ հանդիպել ընկեր Լենինին,
վորին տեսնել վաղուց եր ուզում:

Բայց նա վոչ մի տեղ չհանդիպեց Լենինին և վատ
տրամադրությամբ մտավ Կրեմլի վարսավիրանոցը:
Մտածում ե՝ «Մազերս կխուզեմ ու կսափրվեմ, վոր
կանոնավոր տեսքով վերադառնամ տուն»:

Յեվ ահա նա մտնում ե Կրեմլի վարսավիրանոցը:
Հերթ ե բռնում:

Վարսավիրանոցում շատ մարդ կա: Յերկու վար-
պետ խուզում են ու սափրում: Հաճախորդներն ել ըս-
պասում են:

Գրիգորիյ Իվանովը ախուր տրամադրությամբ
քսան բոպե նստում ե այդ վարսավիրանոցում: Յեվ
չարունակ ցալում ե, վոր ինքը վոչ մի տեղ չհանդի-
պեց Լենինին:

Հանկարծ բացվում ե դուռը և մտնում ե մի նոր
հաճախորդ: Բոլորն ել տեսնում են, վոր յեկողը Վլա-
դիմիր Իլյիչ Լենինն ե— Ժողովրդական Կոմիտարների
Սորհրդի նախագահը:

Այդ ժամանակ բոլորը, ովքեր կային վարսավիրա-
նոցում, վեր են կենում ու ասում են.

— Բարե ձեզ, ընկեր Լենին:

Մեր բանվոր Գրիգորիյ Իվանովը նույնպես բա-
րեւում ե ու յերջանկությունից ժպտալով, նայում ե
ընկեր Լենինին, ուզում ե լավ հիշել նրան, վորպեսզի
հետո ուրիշներին պատմի այդ հանդիպումի մասին:

Ընկեր Լենինը նույնպես բարեւում ե բոլորին և ա-
սում.

— Ո՞վ ե վերջինն սպասում:

Բոլորը զարմացան, վոր Լենինն այդպիսի հարց
տվեց: Բոլորն ել մտածեցին. «Լավ չի լինի, յեթե Լե-
նինը հերթի սպասի: Նա կառավարության գլուխն ե և
յուրաքանչյուր բոպեն թանկ ե նրա համար»:

Յեվ այդ ժամանակ բոլորը, ովքեր կային վարսա-
վիրանոցում, միմիանց ընդհատելով, ասում են Լենի-
նին.

— Վաղել՝միր Իլյիչ, կարևոր չե, թե ով ե վերջի-
նը: Հիմա կ'ազատվի վարպետը, և մենք ձեզ խնդրում
ենք սուանց հերթի գրավել այդ տեղը:

Լենինն ասում ե.


— Շնորհակալ եմ ձեզանից, ընկերներ: Միայն թե
այդ լավ բան չի: Պետք ե հերթ ու կարգ պահպանել:
Մենք ինքներս ենք որենքներ ստեղծում և զբանք պետք
ե կատարենք կյանքի բոլոր, նաև մանր ղեպքերում:

Այդ ասելով, Լենինը նստում ե աթոռին, զբաղանից
մի լրագիր ե հանում և սկսում ե կարդալ:

Այդ ժամանակ աթոռից վեր ե կենում մեր բան-
վոր Գրիգորիյ Իվանովը և, սաստիկ հուզվելով, ասում
ե ընկեր Լենինին.

— Հենց հիմա իմ հերթն ե: Բայց յես ավելի շուտ
կհամաձայնվեմ հինգ տարի չսափրված մնալ, քան
ստիպել, վոր դուք սպասեք: Յեվ յեթե դուք, ընկե՛ր
Լենին, համաձայնվեցիք խախտել կարգը, ապա յես
որինական իրավունք ունեմ իմ հերթը զիջել ձեզ և գը-
րավել ձեր— վերջին հերթը:

Յեվ բոլորը, ովքեր կային վարսավիրանոցում, ա-
սացին.



— Նա լավ է ասում և ճիշտ:

Վարսավիրանոցի վարպետներն էլ, չխկացնելով մկրտաները, նույնպես ասացին:

— Վլադիմիր Իլյիչ, մնում է վարվել այնպես, ինչպես առաջարկեց բանվորը:

Լենինը ժպտաց: Բոլորն էլ տեսան, Վոր նա չի ուզում վերավորել բանվորին և չի ուզում վշտացնել վարպետներին ու հաճախորդներին:

Լենինը լրագիրը դնում է գրպանը և «Շնորհակալ եմ» ասելով, նստում է սափրիչի վրա:

Բոլորն էլ նայում են, թե ինչպես սափրիչը զգույշ և քաղաքավարի սափրում է նրան:

Բոլորը նայում են ընկեր Լենինին և մտածում. «Նո՛ւմե՛ծ մարդ է: Բայց վորքա՛ն համեստ է»:

Բայց ահա վարպետն ավարտեց աշխատանքը: Լենինը դուրս յեկավ վարսավիրանոցից, բոլորին ասելով.

— Յտեսու՛թյուն, ընկերներ: Շնորհակալ եմ ձեզնից:



ՄԵՂՈՒՆԵՐԸ

Շատ հիշն ժամանակներում մարդիկ ապրում էին անձավներում:

Այն ժամանակ քաղաքներ չկային: Չկար վոչ մի խանութ: Վոչ մի տեղ պիրոժնի ու կանֆետ չէր ծախվում: Վոչ վոք եւ չգիտեր պատրաստել այդ քաղցր բաները: Շաքար եւ չկար:

Վատ ժամանակ էր:

Որինակ, մի վորեւե յերեսա քաղցր բան ուզեր: Վո՛րտեղից ճարեյին:

Այդ յերեսայի մայրիկն անտառում մի վայրի խնձոր կպոկեր ու կտար իր փոքրիկին: Ահա ձեզ ամբողջ հյուրասիրությունը:

Բայց քաղցրեղեն չլինելը մարդկանց չէր չփոթեցնում:

Նրանք տեսան, վոր մեղունները խիստ կասկածելի յեն իրենց պահում: Հետ ու առաջ են թռչում: Նստում են ծաղիկների վրա: Այնտեղ ինչ-վոր բան են խմում: Յեւ իսկույն թռչում են ելի իրենց փեթակը, իրենց բույնը, վոր սովորաբար գտնվում էր ծառի փչակում:

Մարդիկ մտածում են. «Հետաքրքիր է խմանալ, թե մեղուններն ի՞նչ են հավաքում իրենց բնում»:

Ու թեև մեղունները սաստիկ կծում են, բայց և

այնպես, մարդիկ դրանից չվախեցան և նայեցին, թե ինչ կա փչակում:

Յեւ տեսան, վոր այնտեղ մեղրամոմից պատրաստված են ինչ-վոր առանձնահատուկ զամբյուղիկներ (մեղրահաց): Յեւ այդ զամբյուղիկներում խիստ հաճելի տեսքով ինչ-վոր բան է գտնվում:

Մարդիկ փորձեցին, թե ինչ է այդ և զարմացան, թե վորքան է համեղ: Այդ մեղր էր:

Յեւ մարդիկ սկսեցին հավաքել մեղրը:

Նրանք մեղրն ուտում և տալիս էյին յերեսաներին: Դրանից բոլորն եւ կաղերււղեցին, չաղացան:

Յեւ դա միանգամայն փոխարինեց այն ամենն, ինչ նրանք չունեյին— պիրոժնիները, կանֆետներն ու չոկոլադը:

Մինչև հիմա յեւ մարդիկ մեղր են հավաքում: Շատերն եւ հատկապես դրաղվում են մեղվարուծությամբ: Յեւ այդ մեղվարուծությունը, յերեսաներ, շատ մեծ նշանակություն ունի մեր գյուղատնտեսության զարգացման համար:

Մեղրից պատրաստվում են զանազան համեղ ուտելիքներ, մեղրարլիթներ, կանֆետներ, խմիչքներ և գեղեր: Մեղրամոմից եւ պատրաստվում են մոմեր, քսելու յուղեր և զանազան քուլիներ մեքենաների և չոգեքարչերի համար:

Այնպես վոր, մեղվարուծությունը զարմանալի ոգտակար և հարկավոր մի գործ է:

Յեւ Վլադիմիր Իլյիչ Լենինը հրաշալի հասկանում էր, վոր պետք է շուտ զարգացնել այդ գործը, վորպեսզի կյանքն եւլ ավելի լավանա:

Յերբ Լենինն ապրում էր Մոսկվայի մոտ, Գորկիում, նա շատ էր հետաքրքրվում այդ գործով, հաճախ իր մոտ էր կանչում այնտեղի մի մեղվարույժի և յերկար զրույց էր անում հետը:

Յեւ ահա մի անգամ այդ մեղվարույժը հարկավոր յեղավ Լենինին:

Լենինը նրան կանչելու համար ուզում էր ուղարկ-

կել մի մարդու, վորը գիտեր, թե մեղվաբույժը վորտեղ է ապրում: Բայց արի ու տես, վոր այդ մարդը գնացել էր Մոսկվա: Իսկ ուրիշ մարդիկ չգիտեին, թե մեղվաբույժը վորտեղ է ապրում: Լսել էին, վոր նա ապրում է ինչ-վոր մոտիկ տեղում, բայց թե վորտեղ — չգիտեին:

Այդ ժամանակ Լենինը վոչ վոքի վոչինչ չասաց, դուրս յեկավ տանից և քայլեց դեպի դաշտ:

Յեվ ահա նա գնում է դաշտով և նայում այս ու այն կողմ:

Տեսնում է ծաղիկներ — սպիտակ առվույտ: Ծաղիկների վրա — բազմաթիվ մեղուներ:

Լենինը նայեց, թե դեպի ո՞ւր են թռչում մեղուները:

Ու տեսավ՝ նրանք թռչում են դեպի ինչ-վոր այգի:

Նայելով այդ մեղուներին, Լենինը նույնպես քայլեց դեպի այգին:

Ահա նա մտնում է այդ այգին: Մոտենում է տնակին: Ծեծում է դուռը: Յեվ ճիշտ վոր — այստեղ է ապրում մեղվաբույժը:

Տեսնելով Լենինին, մեղվաբույժը չափազանց զարմացավ:

Նա ասաց.

— Բարև ձեզ, Վլադիմիր Իլիչ: Ի՞նչպես կարողացաք ինձ գտնել: Յես ապրում եմ գյուղից հեռու: Շատերը չգիտեն, թե յես վորտեղ եմ ապրում: Ո՞վ ձեզ ուղեկցեց այստեղ, մեղվաբույժը: Ո՞վ ձեզ ցույց տվեց ճանապարհը:

Լենինը ծիծաղեց և ասաց.

— Ճանապարհն ինձ ցույց տվին ձեր մեղուները: Նրանք էին, վոր ինձ ուղեկցեցին մինչև այստեղ:

Մեղվաբույժն է՛լ ավելի զարմացավ:

Նա ասաց.

— Վլադիմիր Իլիչ, դուք մեծ մարդ եք և մեծ

հանճար: Դուք կարողանում եք՝ յուրաքանչյուր դործում մի ինչ-վոր առանձին բան գտնել:

Լենինն ասաց.

— Կյանքի յուրաքանչյուր դեպքում պետք է ունադիր լինել, ուրիշ վոչինչ:

Այստեղ Լենինն ու մեղվաբույժը սկսեցին զրույց անել մեղվաբուծության մասին: Նրանք յերկու ժամ զրուցում էին:

Հետո Լենինը հրաժեշտ տվեց և տուն գնաց նույն ճանապարհով, վորով յեկել էր:



ՄԱՀԱՓՈՐՁ ԼԵՆԻՆԻ ԴԵՄ

Լենինը շատ թշնամիներ ուներ:

Նա շատ թշնամիներ ուներ, վորովհետև նա ուզում էր վերակառուցել ամբողջ կյանքը:

Նա ուզում էր, վոր այն բոլոր մարդիկ, վորոնք աշխատում են, շատ լավ ապրեն: Նա չէր սիրում բոլոր նրանց, ովքեր չեն աշխատում: Լենինը դրանց մասին ասաց. թող դրանք առհասարակ վոչինչ չուտեն, յեթե չեն ուզում աշխատել:

Շատերին այդ դուր չեկավ: Յեւ Լենինի թշնամիներն ուզում էին անսպասան սպանել նրան:

Նրանք մի չարագործ կնոջ գրգեցին սպանել աշխատավորների մեծ առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինին:

Նրանք այդ կնոջն ատրճանակ տվին: Այդ ատրճանակը լցրին թուճավոր գնդակներով: Ու ասացին այդ զարչելի չարագործին. «Գնա գործարան: Այնտեղ Լենինն այսօր ճառ է ասելու: Յերբ նա կվերջացնի իր ճառը և դուրս կգա դահլիճից, դու մոտեցիր և յերեք կամ չորս անգամ կրակիր նրա վրա»:

Զարագործ կինն այդպես էլ արեց: Նա սև շոր հագավ, վերջրեց ատրճանակը և գնաց այն գործարանը, վորտեղ յերույթ ուներ Լենինը:

Յեւ յերբ Լենինը ճառ ասելուց հետո դուրս եր գալիս բակը, ինչ-վոր մի մարդ, վոր նավաստու շոր էր հագել, դուռն մոտ դիմամբ վայր ընկավ: Դրանով նա կանգնեցրեց բոլոր բանվորներին, վորոնք գլխում էին Լենինի հետևից:

Հենց դրա շնորհիվ Լենինը մենակ դուրս յեկավ բակը և մենակ մոտեցավ ավտոմոբիլին, վոր նստի:

Բայց այդ մոմենտին սև շոր հագած կինը բոլորովին մոտեցավ Լենինին և չորս անգամ կրակեց նրա վրա:

Չորս գնդակից յերկուսը դիպան Լենինին: Լենինն ընկավ ծանր վիրավորված: Գնդակով խոցվել էր նրա թոքը և վիրավորվել թեւը:

Կինը վախավ, բայց նրան բռնեցին և բանտ ուղարկեցին:

Բանվորները վազեցին դեպի Լենինը: Նրանցից շատերը լալիս էին:

Բանվորները բարձրացրին Լենինին և ավտոմոբիլ նստեցրին:

Յեւ յերբ ավտոմոբիլը գնաց, մարդիկ հանեցին Լենինի վերարկուն ու պիջակը և պարանով կապեցին թեւը, վոր շատ արյուն չգնա:

Մեքենան մտավ Կրեմլ և կանգ առավ Լենինի բնակարանի առաջ:

Լինելով ծանր վիրավորված, Վլադիմիր Իլյիչը մեծ դժվարությամբ դուրս յեկավ ավտոմոբիլից. մարդիկ նրան ոգնում էին, վոր վայր չընկնի:

Մոտ վազեցին բանվորները և ուզում էին Լենինին ձեռների վրա տանել իր բնակարանը:

Բայց Լենինը նրանց թույլ չտվեց այդ անել: Նա ասաց.

— Վո՛չ, չպետք է ինձ տանել ձեռների վրա: Քույրս և կինս կտեսնեն, վոր ինձ ձեռների վրա յեն տանում, կկարծեն, թե դրությունս շատ վատ է: Նրանց չպետք է անհանգստացնել:

Բոլոր շրջապատողները զարմացան, վոր այդպիսի սարսափելի մի պահի Լենինը մտածում է վոչ թե իր, այլ ուրիշների մասին:

Յեւ ահա Լենինը խիստ թեք սանդուղքով ինքը բարձրացավ յերրորդ հարկը:

Ճիշտ է, յերկու կողմից նրան ոգնում էին, բայց և այնպես, նա ինքն եր բարձրանում:

Իսկույն կանչեցին ամենալավ բժիշկներին: Բայց

բժիշկներն ասացին, վոր դրուժյունը շատ ծանր և պնդակները թունավորված են և կարող է արյան վարակում լինել:

Բայց Լենինի առողջ որդանիցմը նրան ոգնեց՝ ապաքինվելու մահացու վերքերից:

Յեւ արդեն մեկ ու կես ամսից հետո վաղիմիւր Իլյիչ Լենինը նորից սկսեց աշխատել:

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՎԱՌԱՐԱՆԱԳՈՐԾԸ

Մի անգամ Լենինն զբոսնում էր անտառում: Հանկարծ տեսավ, վոր մի տղամարդ սղոցում է ծառը: Ծառը սղոցողը վոմն Նիկոլայ Բենդերինն էր: Տարիքավոր, մեծ մորուքով մի մարդ էր նա: Յեւ շատ եւ հանդուգն էր:

Նա արհեստով վառարանագործ էր: Բացի դրանից, նա կարող էր ամեն ինչ պատրաստել: Նրա սայլը ջարդվել էր: Յեւ ահա նա յեկավ անտառ, վորպէսզի մի ծառ կտրի և նորոգի այդ սայլը: Յեւ ահա նա սղոցում է ծառը: Հանկարծ լսում է մեկի ձայնը.

— Բարի որ:

Բենդերինը հետ նայեց: Նրա մոտ կանգնած էր Լենինը: Իսկ Բենդերինը չգիտեր, վոր դա Լենինն է: Նրան վոչինչ չպատասխանեց: Միայն բարկացած գըլխով արավ. այսինքն թե լավ, ելի, բարե ձեզ, մի խանդարեք ինձ:

Լենինն ասում է.

— Ինչո՞ւ յեք ծառը կտրում: Սա հասարակական անտառ է: Այստեղ չի կտրելի ծառ կտրել:

Բենդերինն եւ հանդուգն կերպով պատասխանում է.

— Ուզում եմ կտրել և կտրում եմ: Սայլս պետք է նորոգեմ:

Լենինը դրան վոչինչ չպատասխանեց և հեռացավ:

Վորոչ ժամանակից, — գուցե մի ամսից հետո Լենինն ելի հանդիպեց այդ վառարանագործին: Այս անգամ Լենինն զբոսնում էր դաշտում: Մի քիչ հոգնեց: Նստեց կանաչի վրա՝ հանգստանալու:

Հանկարծ գալիս և այդ վառարանագործ Բենդերինը և հանդգնաբար ասում է Լենինին.

— Ինչո՞ւ յեք այստեղ նստել և խոտը փչացնում: Փիտե՞ք հիմա խոտն ի՞նչ արժի: Բարի յեղեք, վեր կացեք այդտեղից:

Լենինը վեր կացավ ու գնաց դեպի տուն:

Լենինի հետ եր նրա քույրը: Յեվ ահա քույրն ասում է վառարանագործ Բենդերինին.

— Ինչո՞ւ յեք դուք այդպես կոպիտ գոռում: Ձե՞ վոր դա Լենինն է, Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի նախագահը:

Բենդերինը վախեցավ և, վռչինչ չասելով, վազեց դեպի տուն:

Յեվ տանն ասում է կնոջը.

— Ե՛հ, Կատերինա, փորձանք յեկավ: Յերկրորդ անգամ հանդիպում եմ մի մարդու և կոպիտ եմ խոսում հետը. բանից դուրս է գալիս, վոր նա Լենինն է, Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի նախագահը: Ձգիտեմ հիմա ի՞նչ է սպասում ինձ:

Բայց ահա անցնում է ելի վորոշ Ժամանակ, գուցե մի յերկու ամիս, և գալիս է ձմեռը:

Լենինին վառարանագործ եր հարկավոր: Պետք եր սարքել բուխարին, թե չե ծուխը յետ եր տալիս:

Իսկ չըջակա բոլոր գյուղերի համար կար միայն մի վառարանագործ— այդ Բենդերինն եր:

Յեվ ահա յերկու զինվորական գալիս են այդ Բենդերինի մոտ և ասում.

— Դո՞ւք եք վառարանագործ Բենդերինը:


Բենդերինի տրամադրությունը փչացավ, և նա պատասխանում է.

— Այո, յես եմ վառարանագործ Բենդերինը:

Զինվորականներն ասում են.

— Այդ դեպքում հազնվեցեք: Գնանք Լենինի մոտ, Գորկի:

Լսելով այդ խոսքերը, Բենդերինը վախեցավ: Նրա տրամադրությունն է՛լ ավելի փչացավ:



Նա հազնվում է, ձեռները դողում են: Կնոջն ասում է.

— Ե՛հ, մնաք բարով, Կատերինա Մաքսիմովնա: Յերեի մենք ել չենք տեսնվի: Յերեի Լենինը հիշել է իմ բոլոր կոպտությունները— թե ինչպես դաչաում յես վախեցրի նրան, ինչպես հանդուգն պատասխան տվի ծառի վերաբերյալ: Յերեի նա հիշել է այդ բոլորը և վորոշել է ինձ բանտ նստեցնել:

Յեւ վաճառականագործը զինվորականների հետ
գնում է Գորկի: Զինվորականները բենդերինին տա-
նում են սենյակները: Նրան տեսնելով՝ Լենինը վեր է
կենում բազկաթուղի:

Լենինն ասում է.

— Ո՛ր, հին ծանոթ ես: Հիշում եմ, հիշում, թե
ինչպես դաշտում վախեցրիր ինձ: Թե ինչպես եյր
կտրում ծառը:

Բենդերինն սկսեց դողալ, յերբ լսեց այդ խոսքե-
րը: Կանգնած է Լենինի առաջ, ճմլում է գդակը և
քրթմնջում.

— Ներեցեք ինձ, հիմար ծերուկիս:

Լենինն ասում է.

— Դեհ լավ, վոչինչ: Յես արդեն մոռացել եմ
այդ: Ինչ վերաբերում է խոտին, թերևս դու իրավա-
ցի էյիր: Լավ չեր, վոր յես նստել էյի հնձած խոտի
վրա և փչացնում էյի խոտը: Բայց բանն այդ չի: Ար-
դյոք դու չե՞ս կարող, թանկագին ընկեր Բենդերին,
մի փոքրիկ ծառայություն մատուցել ինձ: Իմ բու-
խարին ծուխ է անում: Պետք է նորոգել, վոր ծուխ
չանի: Կարո՞ղ ես այդ անել:

Բենդերինը լսեց այդ սիրալիր խոսքերը և ուրա-
խությունից լեզուն կապ ընկավ:

Միայն գլխով է անում. այսինքն թե կարող եմ
նորոգել: Զեռներով ել նշաններ է անում. այսինքն թե
թող աղյուս ու կավ բերեն:

Այստեղ Բենդերինին կավ ու աղյուսներ են բե-
րում: Յեւ նա սկսում է աշխատել: Շուտով ամեն ինչ
անում է ամենալավ ձևով և գերակատարումով:

Նորից գալիս է Վլադիմիր Իլյիչը և շնորհակա-
լություն է հայտնում վառարանագործ Բենդերինին:
Վլադիմիր Իլյիչը նրան փող է տալիս և հրավիրում է
սեղան նստել՝ թեյ խմելու:

Յեւ վաճառականագործ Բենդերինը Լենինի
հետ սեղան է նստում և խմորեղենով թեյ խմում: Լե-
նինը բարեկամաբար զրույց է անում նրա հետ:

Թեյ խմելով՝ վառարանագործ Բենդերինը հրա-
ժեշտ է տալիս Լենինին և չփոթված վերադառնում
տուն:

Տանն ասում է կնոջը.

— Բարև ձեզ, Կատերինա Մաքսիմովնա: Յես
կարծում եյի, թե մենք չենք տեսնվի, բայց հակառա-
կը դուրս յեկավ: Լենինն այնքան արդարամիտ մարդ է,
վոր յես նույնիսկ չգիտեմ, թե հիմա ինչ ասեմ նոր-
մասին:



Վ Ո Ր Ս

Լենինը շատ եր սիրում վորս անել: Նա վորսում եր բազեր, մայրեհավեր, նապաստակներ ու գայլեր: Սիրում եր նաև աղվեսներ վորսալ:

Աղվեսը խորամանկ կենդանի յե: Ուստի և շատ հետաքրքիր ե նրան վորսալը:

Աղվեսները սովորություն ունեն ապրել բներում: Միայն թե, իրենց խորամանկության շնորհիվ, իրենք չեն փորում իրենց բույնը: Նրանք տեսնում են մի վորս և պատրաստի բույն, վոր տեսնք իր համար փորել և փորսողը,—և հանգիստ կերպով զավթում են այդ բույնը:

Հետո գալիս ե փորսողը: Բայց արի տես, վոր մեկն արդեն ապրում ե նրա բնում:

Դեհ, փորսողն ել տհաճ դարձանք ե զգում, վոր աղվեսը տեղավորվել ե իր բնում: Փորսողը մտածում ե. սա թյուրիմացություն ե, յերևի աղվեսը հիմա կհեռանա:

Բայց աղվեսը չի ել մտածում հեռանալ: Պառկել և բնում ու աչքերը փակել, կարծես այդ նրան չի վերաբերում:

Այդ ժամանակ փորսողն ինքն ել ե մտնում բույնը: Մտածում ե՝ ծայրահեղ դեպքում մի կերպ կապրեմ այդ չիկամազ, յերկարապոչ կենդանու հետ:

Բայց դուրս ե գալիս, վոր աղվեսի հետ ապրելը նրա համար հետաքրքիր չե: Աղվեսը զող ե: Գողանում ե ուտելիքը: Բնում ել գրավում ե ամենալավ տեղը: Այնպես վոր, խեղճ փորսողի պոչը յերբեմն բնից դուրս ե մնում: Իհարկե այդպես ապրելը հաճելի չե

նրա համար: Մի վորսեկ գազան կարող ե կծել նրա պոչը: Անձրեն ել իրեն կարգին:

Յեվ փորսողը ախուր տրամադրությամբ գնում ե ուրիշ վորսե տեղ և իր համար նոր բույն ե փորում. լավ ե, վոր նա յերկար քիթ ունի:

Աղվեսն ել ուրախ ե և զոհ, վոր փորսողը հեռացել ե: Ու սկսում ե լավ ապրել բնում:

Վորսկան շները դանում են այդ բները և այնտեղից վռնդում են աղվեսներին: Շներն սկսում են հաջել, փորել հողը կամ ձյունը, և վախեցած աղվեսը դնդակի պես դուրս ե թռչում բնից: Շներն բնկնում են նրա հետևից: Գլում են դեպի վորսորդները: Սրանք կրակում են, բայց միշտ չե վոր դնդակը դիպչում ե. վորովհետև աղվեսը ճարպիկ ե: Ամեն բույն փոխում ե իր տեղը: Մեկ ել տեսար ծառի հետևում յերևաց նրա պոչը: Յեվ հանկարծ չքացավ աղվեսը: Դեհ արի ու գտիր:

Մի անգամ Մոսկվայի վորսորդներն աղվեսների վորս ելին կազմակերպել: Գործը շատ լավ եր կազմակերպված: Մինչև անգամ դաշտում, ձյան մեջ փոքրիկ դրոշակներ ելին դրել, վոր իմանային, թե այդ ո՛ւմ հողամասն ե և ով վոր կողմը պիտի կրակի, յեթե աղվեսը, շներից փախչելով, դուրս վազի անտառից:

Ահա վորսորդներին կանգնեցրին իրենց տեղերում:

Վաղդիմիր Իլյիչ Լենինին նույնպես ցույց տվին այն տեղը, ուր նա պետք ե կանգներ:

Յեվ Լենինը կիսամուշտակով ու թաղիքե կոշիկներով կանգնեց ծառի մոտ, ճանապարհի վրա: Կանգնել ե հրացանը ձեռքին, սպասում ե:

Հանկարծ անտառում շներն սկսեցին թունդ հաջել: Այդ նշանակում եր, վոր նրանք դտել են աղվեսին և հիմա նրան անտառից դուրս են քշում դեպի դաշտը:

Վորսորդները լարեցին իրենց ուշադրությունը: Լենինը— նույնպես:



Լենինը նայեց, թե արդյոք կարդիր^ո և լցրած իր հրացանը:

Շրջակայքը շատ գեղեցիկ էր: Դաշտ: Անտառ: Ծառերի ճյուղերի վրա փայլում է փափրիկ ձյունը: Զմեռային արևը վռնկեզոծում է ծառերի գազաթը: Հանկարծ, վորտեղից վորտեղ, մի աղվես անտառից վազեց ուղիղ դեպի Լենինը:

Այդ մի գեղեցիկ, չիկամաղ աղվես էր, ահագին, բրդոտ պոչով:

Այդ բաց-չիկագուշն մի աղվես էր, և միայն նրա պոչի ծայրն էր սև:

Փախչելով շներից, նա վազեց դաշտ և այստեղ դես ու դեն ընկնելով, կանգ առավ, տեսավ հրացանավոր մարդուն:

Աղվեսը մի քանի վայրկյան կանգնեց անշարժ: Միայն պոչն էր անհանգիստ պտտում: Վախից փայլում էյին նրա կոթ աչքերը՝ ուղղահայաց բիրերով:

Աղվեսը չէր կարողանում գլխի ընկնել, թե ի՞նչ պիտի անի և ո՛ւր փախչի: Հետևից դալիս էյին շները, առջևում դռնվում էր հրացանավոր մարդը: Հենց այս պատճառով էլ նա շփոթվեց և քաբացած կանգ առավ:

Լենինը հրացանն ուղղեց, վորպեսզի կրակի նրա վրա:

Բայց հանկարծ իջեցրեց ձեռքը և հրացանը դրեց ձյան վրա, վռաների մոտ:

Աղվեսը խաղացնելով իր բրդոտ պոչը, մի կողմ նետվեց և իսկույն չքացավ ծառերի հետևում:

Հենց նույն տեղում, Լենինից քիչ հեռու կանգնած էր նրա կինը, Նադեժդա Կոնստանտինովնան: Նա զարմացած հարցրեց.

— Ինչո՞ւ չկրակեցիր:

Լենինը ժպտալով ասաց.

— Գիտես, չկարողացա կրակել: Աղվեսը շատ գեղեցիկ էր: Այդ պատճառով չուզեցի նրան սպանել: Թող ապրի:

Մոտ յեկան մյուս վորսորդները և նույնպես զարմացան, թե ինչու Լենինը չէր կրակել, յերբ աղվեսն այնքան մոտիկ էր և նույնիսկ չէր փախչում:

Յեվ իմանալով, թե Լենինն ինչո՞ւ չի կրակել, վորսորդներն ավելի ևս զարմացան:

Մի վորսորդ ասաց.

— Վորքան գեղեցիկ է աղվեսը, այնքան նա արժեքավոր է: Յես կկրակեյի նրա վրա:

Բայց Լենինը դրան վռչինչ չպատասխանեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԱՐԳՄ. Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ

Ջրամանը	3
Մոխրագույն ալյուր	8
Ինչպես եր սովորում էինք	12
Թե ինչպես էինք ծխել թողեց	17
Յերբեմն կարելի չէ թանաքամաններ ուտել	21
Պատմվածք այն մասին, թե ինչպես էինք խորամանկություն փանդարմաներին խաբեց	24
Պատմվածք այն մասին, թե ինչպես էինք մի յերեսայի համար խաղալիք գնեց	28

ԹԱՐԳՄ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

Վարսավիրանոցում	32
Մեղուները	36
Մահափորձ էինք դիմ	40
Էնիքն է վառարանագործը	43
Վերջ	48

Տեխ-խմբագիր՝
Ա. Գասպարյան
Սրբագրիչ՝
Մ. Թումանյան

Փլատինի լիազոր՝ 1144 Հրատ. 5227

Պատվեր 334. Տիրաժ 3000.

Թուղթ 62x74. Տպ. 3 1/2 մամուլ

Մեկ մամուլ 22640 նշան.

Հանձնված է արտադրության 17/IV 1940 թ.

Ստորագրված է տպագրության 30/V 1940 թ.

Հայկախոսների տպարան, Յերևան, Էնիքնի 63

804

ՀՀ Ազգային գրադարան



NL0398091

3307